**Հակաբեղմնավորման և հղիության մասին գրքույկ**
**Վալպրոաթթու պարունակող դեղեր օգտագործող աղջիկների, երիտասարդ կանանց և վերարտադրողական տարիքի կանանց համար**

**Կարդացեք այս գրքույկը դեղի փաթեթում տեղադրված ներդիր-թերթիկի հետ միասին՝ վալպրոաթթվի մասին ամբողջական տեղեկատվություն ստանալու համար**: **Հակաբեղմնավորում և հղիություն . ինչ պետք է իմանաք**.

Այս գրքույկը Ձեզ համար է, եթե Դուք աղջիկ եք, երիտասարդ կամ վերարտադրողական պոտենցիալ ունեցող կին եք, ով օգտագործում է վալպրոաթթու պարունակող դեղ:

Այս գրքույկը պարունակում է հիմնական տեղեկատվություն հղիության ընթացքում վալպրոաթթվի օգտագործման ռիսկերի վերաբերյալ:

Եթե ունեք հարցեր, դիմեք Ձեր բժշկին:

**Պահպանեք այս գրքույկը**: **Հնարավոր է, որ Ձեզ անհրաժեշտ լինի նորից կարդալ այն**:

**Բովանդակություն**


1. Հիմնական տեղեկություններ, որոնք պետք է հիշել

2. Ի՞նչ վտանգներ է սպառնում Ձեր երեխային հղիության ընթացքում վալպրոաթթու օգտագործելիս.
   • Բնածին արատներ
   • Մտավոր և ֆիզիկական զարգացման խնդիրներ
3. Հակաբեղմնավորում (հղիության կանխարգելում)
4. Ես 18 տարեկան եմ կամ ավելի բարձր. ի՞նչ է ինձ համար նշանակում վալպրոաթթու ընդունել:

• Սկսում եմ բուժումը վալպրոաթթվով
• Ես ընդունում եմ վալպրոաթթու պարունակող դեղ և չեմ պլանավորում երեխա ունենալ
• Ես ընդունում եմ վալպրոաթթու պարունակող դեղ և պատրաստվում եմ երեխա ունենալ
• Ես ընդունում եմ վալպրոաթթու պարունակող դեղ և հղի եմ կամ կասկածում եմ, որ հղի եմ

5. Ես մինչև 18 տարեկան եմ. ի՞նչ է ինձ համար նշանակում վալպրոաթթու ընդունել:

## 1.**ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ՊԵՏՔ Է ՀԻՇԵԼ**

- Վալպրոաթթու պարունակող դեղերն օգտագործվում են էպիլեպսիայի և երկբևեռ խանգարումների բուժման համար:

• Վերարտադրողական տարիքի կանայք և աղջիկները վալպրոաթթու պետք է ընդունեն միայն այն դեպքում, երբ այլ դեղերն արդյունավետ չեն, քանի որ հղիության ընթացքում վալպրոաթթվի ընդունումը կարող է լուրջ վնաս հասցնել արգանդում զարգացող երեխային:
• Եթե Դուք վալպրոաթթու եք ընդունում և կարող եք հղիանալ.
• Միշտ օգտագործեք արդյունավետ հակաբեղմնավորում:
• Երբեք մի դադարեցրեք հակաբեղմնավորիչների ընդունումը:
• Եթե հղիություն եք պլանավորում.
• Մի դադարեցրեք հակաբեղմնավորիչների ընդունումը Ձեր բժշկի հետ խորհրդակցելուց առաջ:
• Երբեք մի դադարեցրեք վալպրոաթթվի ընդունումը առանց բժշկի խորհրդատվության, քանի որ դա կարող է վատթարացնել Ձեր վիճակը:
• Եթե Դուք հղիացել եք վալպրոաթթու օգտագործելու շրջանում Ձեզ մոտ սկսվել է հղիություն.
• Մի դադարեցրեք վալպրոաթթվի օգտագործումը, քանի որ դա կարող է վատթարացնել Ձեր էպիլեպսիան կամ երկբևեռ խանգարումը:
• Որքան հնարավոր է շուտ խորհրդակցեք բժշկի հետ՝ քննարկելու Ձեր հետագա բուժման տարբերակները և այն ամենը, ինչ Դուք պետք է իմանաք: Ձեր բժիշկը կբացատրի, թե արդյոք Դուք պետք է անցնեք այլ բուժման և ինչ պետք է անել դրա համար:
• Հիշեք՝ պարբերաբար այցելել Ձեր բժշկին (առնվազն տարին մեկ անգամ):
• Առաջին ընդունման ժամանակ, և դրանից հետո ամեն տարի, Դուք և Ձեր բժիշկը կքննարկեք, կլրացնեք և կստորագրեք ռիսկի մասին տեղեկացված լինելուհամաձայնության ձևաթուղթը որպեսզի համոզվեք, որ լավ տեղյակ եք հղիության ընթացքում վալպրոաթթվի օգտագործման ռիսկերին և հասկանում եք հղիությունը կանխելու անհրաժեշտությունը՝ բուժման ընթացքում:

## 2. **Ի՞ՆՉ ՌԻՍԿԵՐ ԿԱՆ ՁԵՐ ԵՐԵԽԱՅԻ ՀԱՄԱՐ ՀՂԻՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՎԱԼՊՐՈԱԹԹՈՒ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԴԵՂԵՐ ՕԳՏԱԳՈՐԾԵԼԻՍ**

Որքան մեծ է վալպրոաթթվի դեղաչափը, այնքան մեծ է վտանգը երեխայի համար, սակայն վալպրոաթթվի ցանկացած դեղաչափն ընդունելը ռիսկեր է պարունակում:

Հղիության ընթացքում վալպրոաթթվի ընդունումը կարող է առաջացնել լուրջ բնածին արատներ:

- Հղիության ընթացքում վալպրոաթթու պարունակող դեղն ընդունելիս 100 երեխայից մոտավորապես 11-ի մոտ կարող է զարգանալ բնածին արատ, մինչդեռ ընդհանուր բնակչության կանանց շրջանում բնածին արատներ են հայտնաբերվում 100 երեխայից 2-3-ի մոտ:

**Ի՞նչ վնաս կարող է հասցվել Ձեր երեխային**:

Վալպրոաթթու օգտագործելու ժամանակ հայտնաբերված բնածին արատները ներառում են, օրինակ՝

- սպինա բիֆիդա,
- դեմքի և գանգի դեֆորմացիաներ, օրինակ՝ «նապաստակի շրթունք»,
- վերջույթների, սրտի, երիկամների, միզուղիների, սեռական օրգանների, տեսողության օրգանների ոչ ճիշտ ձևավորում, որը կարող է հանգեցնել տեսողության խանգարման,
- լսողության խնդիրներ կամ խուլություն:

**Հղիության ընթացքում վալպրոաթթվի օգտագործումը կարող է ազդել Ձեր երեխայի զարգացման վրա**:

Հղիության ընթացքում վալպրոաթթու ընդունած կանանց երեխաների 100-ից մոտավորապես 30-40-ը կարող են ունենալ զարգացման խնդիրներ, ինչպիսիք են.

- քայլելու և խոսքի զարգացման ավելի ուշ սկիզբ,
- ցածր մտավոր ունակություններ,
- խոսքի և լեզվի յուրացման թույլ հմտություններ,
- հիշողության հետ կապված խնդիրներ:

  Այս երեխաների մոտ ավելի հավանական է աուտիզմ կամ աուտիզմի սպեկտրի խանգարում: Բացի այդ, նրանց մոտ մեծանում է ուշադրության դեֆիցիտի և/կամ գերակտիվության զարգացման ռիսկը:

3. **Հակաբեղմնավորիչ միջոցառումներ** (**Հղիության կանխարգելում**)

Օգտագործեք արդյունավետ հակաբեղմնավորիչներ, ինչպես խորհուրդ է տալիս Ձեր բժիշկը, մինչ Դուք ընդունում եք վալպրոաթթու:

Սա անհրաժեշտ է վալպրոաթթու պարունակող դեղերի օգտագործման ժամանակ չպլանավորված հղիությունից պաշտպանվելու համար, որը կարող է վնասել Ձեր երեխային:

Քննարկեք Ձեր բժշկի և/կամ գինեկոլոգի հետ Ձեզ համար հակաբեղմնավորման լավագույն միջոցը:

Դուք պետք է օգտագործեք հակաբեղմնավորման հուսալի մեթոդներ, նույնիսկ եթե սեռական ակտիվություն չունեք, եթե չկան համոզիչ ապացույցներ, որ հղիության վտանգ չկա: Ձեր բժիշկը դա կքննարկի Ձեզ հետ:

4. **Ես** 18 **տարեկան եմ կամ ավելի բարձր. ի՞նչ է ինձ համար նշանակում վալպրոաթթու ընդունել**:

Սկսում եմ բուժումը վալպրոաթթվով

Ձեր բժիշկը կբացատրի Ձեզ, թե ինչու է նա կարծում, որ վալպրոաթթուն Ձեզ համար համապատասխան բուժում է և կպատմի Ձեզ հայտնի ռիսկերի մասին: Ձեր բժիշկը պետք է նշանակի վալպրոաթթվի դեղեր միայն այն դեպքում, եթե որևէ այլ բուժում չի օգնում:

• Ձեր բժիշկը Ձեզ վալպրոաթթու կնշանակի միայն այն դեպքում, եթե Դուք հղի չեք և պարբերաբար օգտագործում եք հակաբեղմնավորիչ միջոցներ:

• Ձեր բժիշկը Ձեզ կխնդրի հղիության թեստ հանձնել:

• Ապագայում Ձեր բժշկի հետ բուժման վերանայումը պետք է իրականացվի կանոնավոր հիմունքներով, բայց առնվազն տարին մեկ անգամ:

Ձեր առաջին այցելության ժամանակ Դուք և Ձեր բուժաշխատողը կկարդար, կլրացներ և կստորագրեր ռիսկի մասին տեղեկացված համաձայնության ձևը: Սա անհրաժեշտ է, որպեսզի Դուք սովորեք, հասկանար և գիտակցեր հղիության ընթացքում վալպրոաթթու պարունակող դեղեր ընդունելու հետ կապված հնարավոր ռիսկերի մասին բոլոր տեղեկությունները, ինչպես նաև ստանար առաջարկություններ վալպրոաթթվային դեղեր ընդունելիս հնարավոր հղիության կանխարգելման վերաբերյալ: Ձևը պետք է վերստորագրվի տարեկան կտրվածքով:

**Ես ընդունում եմ վալպրոաթթու դեղը և չեմ պլանավորում հղիանալ**

Միշտ օգտագործեք հակաբեղմնավորման հուսալի մեթոդներ, նույնիսկ եթե սեռական ակտիվություն չունեք.

• Վալպրոաթթու ընդունելու ընթացքում օգտագործեք արդյունավետ հակաբեղմնավորիչներ:

• Երբեք ինքնուրույն մի դադարեցրեք օգտագործել հակաբեղմնավորիչ միջոցները:

Եթե հակաբեղմնավորման վերաբերյալ խորհրդատվության կարիք ունեք, քննարկեք այս հարցը Ձեր բժշկի և/կամ գինեկոլոգի հետ:

Եթե հղի եք կամ կասկածում եք, որ հղի եք, հնարավորինս շուտ խորհրդակցեք Ձեր բժշկի հետ: Նույնիսկ եթե Դուք հղիանում եք, մի դադարեցրեք վալպրոաթաթթվի ընդունումը, մինչև չխոսեք Ձեր բժշկի հետ:

Դուք պետք է պարբերաբար (առնվազն տարին մեկ անգամ) վերանայեք Ձեր բուժումը Ձեր բժշկի հետ: Ձեր տարեկան այցելության ժամանակ Դուք և Ձեր առողջապահական ծառայություններ մատուցողը կկարդաք, կլրացնեք և կստորագրեք ռիսկի մասին տեղեկացված համաձայնության ձևը: Սա անհրաժեշտ է, որպեսզի Դուք սովորեք, հասկանաք և գիտակցեք հղիության ընթացքում վալպրոաթթու պարունակող դեղեր ընդունելու հետ կապված հնարավոր ռիսկերի մասին բոլոր տեղեկությունները, ինչպես նաև ստանաք առաջարկություններ վալպրոաթթվային դեղեր ընդունելիս հնարավոր հղիության կանխարգելման վերաբերյալ:

**Ես ընդունում եմ վալպրոաթթու դեղը և պլանավորում եմ հղիություն**

Մի դադարեք վալպրոաթթվի կամ հակաբեղմնավորիչների ընդունումը, մինչև չքննարկեք դա Ձեր բժշկի հետ:

• Ձեր բժիշկը կարող է որոշել փոխել Ձեր վալպրոաթթվով բուժումը հղիությունից շատ առաջ՝ համոզվելու համար, որ Ձեր վիճակը կայուն է մնում նոր բուժման ժամանակ:

• Նախքան հղիանալ պլանավորելը, Դուք պետք է Ձեր բժշկի հետ որոշեք, թե ինչպես շարունակել Ձեր բուժումը:

• Դուք պետք է պարբերաբար վերանայեք Ձեր բուժումը (առնվազն տարին մեկ անգամ) Ձեր բժշկի հետ:

Ձեր այցելության ժամանակ Դուք և Ձեր բժիշկը կկարդաք, կլրացնեք և կստորագրեք ռիսկի մասին տեղեկացված համաձայնության ձևը: Սա անհրաժեշտ է, որպեսզի Դուք իմանաք, հասկանաք և գիտակցեք հղիության ընթացքում վալպրոաթթու դեղներ ընդունելու հետ կապված հնարավոր ռիսկերի մասին ամբողջ տեղեկատվությունը, ինչպես նաև ստանաք առաջարկություններ վալպրոաթթվի դեղեր ընդունելիս հնարավոր հղիության կանխարգելման վերաբերյալ:

Ես ընդունում եմ վալպրոաթթու դեղը և հղի եմ կամ կասկածում եմ, որ հղի եմ

Մի դադարեցրեք վալպրոաթթվի ընդունումը, այլապես Ձեր էպիլեպսիան կամ երկբևեռ խանգարումը կարող է վատթարանալ:

Հնարավորինս արագ խորհրդակցեք Ձեր բժշկի հետ՝ քննարկելու հետագա բուժման Ձեր տարբերակները և այն ամենը, ինչ Դուք պետք է իմանաք: Ձեր բժիշկը կբացատրի, թե արդյոք Դուք պետք է անցնեք այլ բուժման և ինչ պետք է անեք դրա համար:

Վալպրոաթթու օգտագործած մայրերից ծնված երեխաները ավելի մեծ վտանգի տակ են.

• զարգացման բնածին արատներ և

• մտավոր և ֆիզիկական զարգացման խնդիրներ:

Երկուսն էլ կարող են լուրջ ազդեցություն ունենալ Ձեր երեխայի կյանքի վրա:

Ձեր բժիշկը ուշադիր հետևելու է Ձեր վիճակին՝

• Համոզվեք, որ Ձեր առողջությունը վերահսկվում է:

• Հետևեք Ձեր երեխայի զարգացմանը:

Ձեր այցելության ժամանակ Դուք և Ձեր բժիշկը կկարդաք, կլրացնեք և կստորագրեք ռիսկի մասին տեղեկացված համաձայնության ձևը: Սա անհրաժեշտ է, որպեսզի Դուք իմանաք, հասկանաք և գիտակցեք հղիության ընթացքում վալպրոաթթվի դեղեր ընդունելու հետ կապված հնարավոր ռիսկերի մասին բոլոր տեղեկությունները:

1. **ԵՍ ՄԻՆՉԵՎ** 18 **ՏԱՐԵԿԱՆ ԵՄ. Ի՞ՆՉ Է ԻՆՁ ՀԱՄԱՐ ՆՇԱՆԱԿՈՒՄ ՎԱԼՊՐՈԱԹԹՈՒ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ**:





Ձեզ նշանակել են վալպրոաթթու պարունակող դեղը էպիլեպսիայի բուժման համար, սա կարևոր դեղ է, որի շնորհիվ Ձեզ լավ եք զգում:

Երեխաները, որոնց մայրերը հղիության ընթացքում օգտագործել են վալպրոաթթու, կարող են առողջական լուրջ խնդիրներ ունենալ.

**Հնարավոր է պլանավորեք հղիություն**:
**Հետեւաբար**, **դուք պետք է խստորեն հետևեքայս առաջարկություններին**.

| **Դեռահասներ** | **Օրիորդներ** |
|---|---|

Ես դեռ չեմ ունեցել իմ առաջին դաշտանը



Երբ դուք ունեցել եք Ձեր առաջին դաշտանը, հայտնեք այդ մասին

Ես արդեն ունեցել եմ իմ առաջին դաշտանը



Ձեր բուժող բժիշկը Համոզվել է, որ Դուք Հղի չեք

Ես հղի եմ կամ կասկածում եմ, որ հղի եմ





Ձեր բժիշկը կնշանակի հակաբեղմնավորիչ դեղեր, որոնք կոչվում են հակաբեղմնավորիչներ, նույնիսկ եթե դուք սեռական ակտիվ կյանք չեք վարում:
Վալպրոաթթու ընդունելիս պետք է միշտ օգտագործել հակաբեղմնավորիչ միջոցներ:



Ամեն դեպքում, պետք է տարեկան առնվազն մեկ անգամ այցելել բժշկի:
Այցի ընթացքում Ձեր բժիշկը.
- կստուգի, թե արդյոք վալպրոաթթուն դեռ ճիշտ ընտրված դեղ է Ձեզ համար,
- կպատմի վալպրոաթթվի կիրառման մասին, և
-կխնդրի Ձեզ (կամ Ձեր ծնողներին/խնամակալներին) ստորագրել փաստաթուղթ, որը կհաստատի, որ Դուք հասկանում եք բոլոր առաջարկությունները:

?

Հարցերի դեպքում դիմեք Ձեր բժշկին կամ ծնողին/խնամակալին:

**Երբեք մի դադարեցրեք վալպրոաթթվի ընդունումն առանց բժշկի հետ խորհրդակցելու**: